

ԵՐԱՆՏԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ-ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏԸ
(Վերժինե Սվազյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Բանագետ, բանահավաք, ժողովրդագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազյանը ծնվել է 1934 թ. մարտի 1-ին, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գրող, հասարակական-մշակութային գործիչ Գառնիկ Սվազյանի ընտանիքում: Արևմտահայության նկատմամբ Օսմանյան կայսրության կառավարող շրջանների վայրագությունները, բռնի տարագրված հայերի տառապանքներն ու թշվառությունը խոր հետք են թողել Գառնիկ Սվազյանի հոգում: Լինելով Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) Ալեքսանդրիայի մասնաճյուղի հիմնադիրն ու փոխնախագահը՝ նա եկել է այն համոզման, որ աշխարհով մեկ սփռված հայերի միակ հանգրվանը Մայր Հայաստանն է: Ուստի նա իր ամբողջ կյանքը, գրական ու հասարակական գործունեությունը նվիրել է վերածնվող հայրենիքի նկատմամբ սփյուռքահայերի մեջ հավատ ներշնչելու և նրա վերաշինությանը մասնակցելու գործին:



Ալեքսանդրիայում ապրած տարիներին Վերժինեն իր հայեցի դաստիարակությունն ստացել է նախ Մելքոնյան մանկապարտեզում, այնուհետև հաճախել է տեղի Պողոսյան ազգային վարժարանը, ուր բարձր հիմքերի վրա էր դրված հայոց լեզվի ուսուցումը, իսկ հետագայում նա իր ուսումը շարունակել է Անարատ Հղության հայ կույսերի դպրոցում, որտեղ ֆրանսերենից, անգլերենից բացի ուսուցանվում էր նաև հայոց լեզու:

1947 թ. Սվազյանների ընտանիքը ներգաղթել է հայրենիք: Չորս ամիս անց՝ 44 տարեկան հասակում վախճանվել է հայրը: Հինգ անչափահաս երեխաների խնամքն ընկնում է կնոջ՝ պոլսեցի հայտնի բարեգործ, «Որբերի Հայր-Պաշտպան» Քերովրե Ադա-Չրաքյանի դստեր՝ Տիկին Միրարփիի ուսերին: Տարիներ անց ընտանիքն արտագաղթում է, իսկ Վերժինեն մնում է հայրենիքում:

1950-ական թվականներից սկսած Վ. Սվազյանը «Սովետական Հայաստան» ամսագրի և մամուլի էջերում հանդես է գալիս Հայաստանում հանգրվանած արևմտահայերի կյանքի ու կենցաղի տարաբնույթ կողմերը ներկայացնող հոդվածներով, ինչպես նաև հեռուստատեսությամբ և ռադիոյով հաղորդումներ է կազմակերպում՝ լուսաբանելով ժողովրդական նյութերում առկա ինչպես ազգային, համահայկական, նույնպես և սովյալ տեղավայրին բնորոշ յուրահատկությո-

յունները: Վ. Սվազյանն իրեն նվիրում է Հայոց ցեղասպանությունից մազապուրծ վերապրողների հոգևոր արժեքների վերհանմանը:

1958 թվականից Վ. Սվազյանն աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Արեղյանի անվան անհատական թոշակառու: Միբիբյան աքսորից նոր վերադարձած հայ բանագիտության երախտավոր, Վ. Սվազյանի գիտական ղեկավար, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, տեսնելով Մուսա լեռան խրթին բարբառով նրա գրառած բանահյուսական տարաբնույթ նյութերը և ծանոթանալով դրանց գրառման բարբառագիտական մակարդակին, առաջարկում է ուսումնասիրել Գարեգին Մրվանձտյանցի գործի արժանի շարունակող, արևմտահայ բանագետ-բանահավաք Սարգիս Հայկունու կյանքն ու գործը: 1965 թ. Վ. Սվազյանն այդ թեմայով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Սարգիս Հայկունի. Կյանքն ու գործը» վերնագրով, որը լույս է տեսել «Հայ ազգագրություն և բանահյուսություն» պրակի 4-րդ հատորում (Երևան, 1973):

1960 թվականից մինչև օրս նա աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1996–2004 թթ. համատեղության կարգով՝ նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Վ. Սվազյանը կազմել ու խմբագրել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի «Արցախ-Ուտիք» (հ. VI, 1973), «Տարոն-Տուրուբերան» (հ. XII, 1984), «Վան-Վասպուրական» (հ. XV, 1998) պատմաազգագրական շրջանների հեքիաթները: Վերջինիս համար ՀՀ «Վան-Վասպուրական» հայրենակցական միությունը նրան շնորհել է «Պատվավոր Վասպուրականցու» կոչում (1999):

«Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի XVI պրակում լույս է տեսնում Վ. Սվազյանի «Մուսա լեռ» (1984) աշխատությունը, որտեղ հեղինակը, հավատարիմ մնալով Մուսա լեռան (Սվեդիո) խրթին բարբառի երեք ճյուղավորումների յուրահատուկ նրբերանգներին, փրկում է արդեն իսկ անհետացող Մուսա լեռան բարբառով ստեղծված բանահյուսական նշխարները: Մույն աշխատությունը 1985 թ. արժանացել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության «Գովեստագրին», ինչպես նաև՝ «Մուսա լեռ» հայրենակցական ընդհանուր միության (Բեյրութ) «Պատուաւոր Մուսալեռցի ոսկե մեդալին» (1985) և ՀՀ «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միության «Պատվոգրին» (1995): Նա նաև կազմել ու խմբագրել է բնիկ մուսալեռցի Գրիգոր Գյոզայանի «Մուսա լեռան ազգագրությունը» (2001) գիրքը:

Վ. Սվազյանի «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994) ստվարածավալ աշխատությունը ընդգրկում է ոչ միայն Կիլիկիայի, այլ ընդհանրապես արևմտահայության 50 տեղավայրերի բանավոր մշակույթն իր բազմաբովանդակ կողմերով ու բարբառային նրբերանգներով: Հեղինակը պատմական փաստերի և իր գրառած ժողովրդագիտական նյութերի համադրմամբ ներկայացնում է Հայկական Կիլիկիայի և արևմտահայության պատմամշակութաբանական շրջափուլերը՝ սկզբից մինչև մեր օրերը: Վ. Սվազյանի «Մեծ եղեռն.

Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995) աշխատության մեջ ամփոփված են նրա գրառած պատմափաստագրական բնույթի նյութերը:

Հանրագումարի բերելով «Մուսա լեռ», «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», ինչպես նաև «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» աշխատություններում առկա ժողովրդագիտական նյութերի տիպաբանական, սոցիոլոգիական, բարբառագիտական ու կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները և նորովի լուսաբանելով իր իսկ գրառած նյութերի ներքին բովանդակությունը՝ Վ. Սվազյանը պատրաստում է «Կիլիկիայի հայոց բանավոր ավանդությունը» ընդգրկուն մենագրությունը և 1995 թ. այն պաշտպանում որպես դոկտորական ատենախոսություն: Այս աշխատության համար ՀՀ «Զեյթուն» պատմամշակութային միությունը նրան շնորհել է «Պատվավոր Զեյթունցու» (1992), իսկ ՀՀ «Հաճրն» հայրենակցական միությունը՝ «Պատվավոր Հաճրնցու» (2006) կոչումներ:

Բանահյուսական և փաստավավերական բացառիկ արժեք են ներկայացնում Վ. Սվազյանի գրի առած և զուգահեռ թարգմանությամբ ներկայացրած դերգորյան թուրքալեզու երգերը, որոնք 1997–1999 թթ. հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ 2005 թ. Ստամբուլում հրատարակվել են առանձին գրքերով՝ «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» վերնագրով: Պատմական տվյալների և ժողովրդագիտական նյութերի հիման վրա ներկայացված են արևմտահայությանը բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, ինչպես նաև նրանց մղած արդար պայքարն իրենց ապրելու տարրական իրավունքը պաշտպանելու համար: Գիրքը զետեղվել է նաև Համացանցում՝ զայրույթ առաջացնելով ցեղասպանությունն ուրացող թուրքերի շրջանում:

1996 թ. Կ. Պոլսո Պատրիարքական աթոռի հիմնադրման 535-ամյակին նվիրված միջոցառումների շարքում Վարդավառի՝ Քրիստոսի պայծառակերպության, տոնին նվիրված միջազգային գիտաժողովի ընթացքում Վ. Սվազյանը նպատակադրվում և հետևողականորեն իրականացնում է Պոլսո վաթսուներեքամյա հայ համայնքի մշակութային կյանքի ուսումնասիրությունը: Նա ժողովրդագիտական նյութեր է գրառում Պոլսո հայ համայնքից, Մր. Փրկիչ ազգային հիվանդանոցի ծերանոցից, Իշխանաց կղզիներից և Սաման դաղից (Մուսա լեռ): 2000 թ. լույս է տեսնում «Պոլսահայոց բանահիւսութիւնը» արժեքավոր աշխատասիրությունը, որն ամփոփում է արդի պոլսահայության, ինչպես նաև Թուրքիայի գավառներից Ստամբուլ փոխադրված հայության ներկայացուցիչներից, մասամբ և անցյալ դարի 20-ական թվականներին Հայաստան ներգաղթած պոլսահայերից հեղինակի անցյալում գրառած բանավոր ավանդության տարբերույթ նյութերը: Աշխատությունը բարձր է գնահատել Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO - Institut National des Langues et Civilisations Orientales) լեզվաբանական մասնաճյուղի տնօրեն, ֆրանսաբնակ հայագետ, դոկտոր Անահիտ Տոնապետյանը¹: Մույն աշխատության հա-

¹ A. Donabedian. Pr. Verjiné Svazlian. Traditions orales des Arméniens de Constantinople. Erevan, Académie des Sciences. 2000, 592 p.– Revue du Monde Arménien. Moderne et Contemporain. Revue de Société des études Arméniennes. Paris, 2000, T. 5 (1999–2000), p. 230–231. *Ա. Տոնապետյան* ի

մար Վ. Սվազյանը Մփյուռքում արժանացել է մի շարք պարգևների. Փարիզի «Արարատ» հայագիտական ակադեմիան նրան շնորհել է պրոֆեսորի կոչում (2004), Մոնրեալում (Կանադա) Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե մեդալ» (2005), Միքիայում ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ «Մեսրոպ Մաշտոց հուշամեդալ» (2005), իսկ Ալեքսանդրիայի (Եգիպտոս) հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի Բանալի ոսկե հուշամեդալ» (2006):

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ լույս տեսած «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (2000) ստվարածավալ և արժեքավոր աշխատությունն ընդգրկում է պատմական Հայաստանից, Կիլիկիայից, Անատոլիայի հայաբնակ գավառներից տարագրված և աշխարհի տարբեր երկրներում գոյատևած, այնուհետև Մայր Հայրենիքում հանգրվանած հայրենադարձներից Վ. Սվազյանի գրառած փաստավավերական վկայությունները՝ հուշապատումներ, պատմական իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ժողովրդական փաստալից գրույցներ, երգեր ու վիպերգեր (600 միավոր), որոնց պատմաճանաչողական արժեքի և փաստագրական հավաստիության մասին հիշյալ գրքի խմբագիր Ս. Հարությունյանը իրավացիորեն գրել է. «Ականատեսների հուշապատումներն ու մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն այդ ժամանակաշրջանի մեր ողբերգական պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով» (էջ 12):

Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (UCLA) Արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, Հայոց և Միջին Արևելքի պատմության պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը «մեծապես տպավորիչ» է համարում Վ. Սվազյանի վերոհիշյալ աշխատությունը և նշում. «Մարդիկ, ովքեր մակերեսայնորեն կնայեն այս աշխատանքին, չեն կարող գիտակցել, թե ի նչ ծավալի սիրո և նվիրումի աշխատանք է կատարվել»²:

Փենսիլվանիայի համալսարանի լեզվաբանության և Հարվարդի համալսարանի, ինչպես նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության դոկտոր, Իրավագիտության ամբիոնի վարիչ Թոմաս Մամուլեյանը Վ. Սվազյանի վերոհիշյալ աշխատությունը դիտարկում է հայագիտության, լեզվաբանության, ինչպես նաև իրավագիտության տեսանկյուններից և նշում. «...Ազգագրական տեսանկյունից այս խնամքով կազմված հատորը հարուստ է այնպիսի մանրամասնություններով, որոնք անսպառ նյութ են հաղորդում Արևմտյան Հայաստանի այժմ անհետացած համայնքների լեզվաբանական և մշակութային ուսումնասիրությունների համար: Իրավական առումով վկայությունների յու-

Վերժինե Սվազյան, Պոլսահայոց բանահիստորիկը, Երևան, 2000, 616 էջ.– ՊԲՀ, 2001, №3, էջ 290-291:

² Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Վերժինե Սվազյան. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000, 500 էջ.– ՊԲՀ, 2001, №2, էջ 305-306:

րահատկությունն ու առանձնահատկությունը, դոկտոր Սվազյանի խորագիտակ մեթոդորոգիական մոտեցմամբ, հատորը դարձնում են համոզիչ վկայություն և ցուցմունք»³:

Այդ աշխատության համար, որը «կարևոր ներդրում է Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանության պատմության և հայ պատմագիտության բնագավառում», հեղինակն արժանացել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգրին» (2000), Սփյուռքի Թեքեյան Մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» գրական-բանասիրական մրցանակին (2002), ինչպես նաև՝ ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիտոյֆ Նանսենի հուշամեդալին» (2003):

Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակին է նվիրվել Վ. Սվազյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով ուսումնասիրությունը՝ վեց լեզուներով (2003՝ հայերեն, 2004, 2005՝ անգլերեն, 2005՝ ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսկ թուրքերենը՝ Ստամբուլում): «Ցեղասպանագիտության մեջ ձեռք բերած վաստակի համար» նրան շնորհվել է ՀՀ կառավարության «Հուշամեդալ» (2005): «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու համար» Վ. Սվազյանի սույն աշխատություններն արժանացել են ՀՀ Նախագահի Առաջին մրցանակին և ոսկե հուշամեդալին (2006):

«Համաշխարհային ֆոլկլոր և ժողովրդական կենցաղ» խորագիրը կրող քառահատոր հանրագիտարանում Վ. Սվազյանին է պատկանում «Հայաստան» ծավալուն և բազմաբովանդակ անգլերեն հոդվածը (Armenia. “The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife.” William M. Clements, ed. (4 volumes). Volume 2: Southeast Asia and India, Central and East Asia, Middle East. Westport (Connecticut), London, 2006, pp. 357-372): Հանրագիտարանային այս հոդվածում գաղափար է տրվում նաև հայ ժողովրդի ճարտարարվեստի, մանրանկարչության, երգ ու պարի, թատրոնի, ասեղնագործության, գորգագործության, ազգային տարագի և կյանք ու կենցաղի մասին: Հայ ժողովրդական մշակույթի հարստությունն ու պատմական փաստերի հիմնավորվածությունը օտար հրատարակիչներին հնարավորություն են ընձեռել Հայաստանին հատկացնել կրկնակի ծավալ՝ 15 մեծադիր էջ: Վ. Սվազյանի անգլերեն ընդգրկուն այդ հոդվածը ծանրակշիռ ներդրում է հայ ժողովրդի բանահյուսությունն ու կենցաղը համաշխարհային հեղինակավոր հանրագիտարանի միջոցով առաջին անգամ աշխարհին ներկայացնելու առումով, որի համար Ամերիկյան կենսագրական ինստիտուտը նրան շնորհել է “The Great Mind of the 21st Century” («21-րդ դարի մեծագույն միտք») տիտղոս և հուշամեդալ: Նրա կենսագրականը տեղ է գտել Մեծ Բրիտանիայի (Քեմբրիջ) Միջազգային կենսագրական կենտրոնի 2009 թվին լույս ընծայած «21-րդ դարի 2000 երևելի մտա-

³ Թ. Ս ա մ ու ե լ յ ա ն. Վերժինե Սվազյան. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000, 500 էջ.– «Հանդես հայագիտության», Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական հոդվածների և հրատարակումների ժողովածու, Երևան, 2001, թիվ IV, էջ 105-106:

վորականներ» հանրագիտարանում (2000 Outstanding Intellectuals of the 21st Century. International Biographical Centre, Cambridge, England, 2009, p. 431):

Վ. Սվազյանը մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների, ինչպես նաև զեկուցել սփյուռքահայ գաղթօջախների տարբեր կազմակերպություններում (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և Հայ Դատին առնչվող թեմաներով:

ԱՄՆ կատարած իր անձնական և գիտաժողովային մի շարք այցելությունների ընթացքում (1979, 1989-1990, 2001, 2008) Վ. Սվազյանը տեղի հայ համայնքի սոցիալական տարբեր շերտերից և սեռատարիքային տարբեր ներկայացուցիչներից գրառել է ժողովրդագիտական տարաբնույթ նյութեր, որոնք, առաջին անգամ հրատարակվելով, գաղափար կտան հայրենի հողից կտրված հայության խաթարված ավանդապահության, ինչպես նաև ձուլման և ներկայիս համաշխարհայնացման պայմաններում նրանց մշակութային անխուսափելի փոխակերպումների մակարդակի մասին:

Վ. Սվազյանը երկու տասնյակից ավելի գրքերի և 500-ից ավելի գիտական ու հրապարակախոսական հոդվածների հեղինակ է, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: 2009 թ. ծննդյան 75-ամյակի առթիվ նա արժանացել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Պատվոգրին», ինչպես նաև՝ Հայաստանի ազգային գրադարանի «Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտ» հուշամեդալին, իսկ «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միության նախագահությունը նրան շնորհել է «Հավերժ փառք Մուսա լեռան հերոսներին. 1915» հուշամեդալ:

Վաստակաշատ բանագետ, ժողովրդագետ Վերժինե Սվազյանն ավելի քան 50 տարիների ընթացքում գրառել, ձայնագրել, տեսագրել, ուսումնասիրել և հրատարակել է մեր զավթված Երկրի՝ պատմական Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի ավելի քան 100 տեղավայրերից բռնի տարագրված, Հայաստանում ու Սփյուռքում բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության տարաբնույթ նշխարները՝ անհետ կորստից փրկելով և տարբեր լեզուներով աշխարհին ներկայացնելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը:

ԹԱՄԱՐ ՀԱՅԴԱՊԵՏՅԱՆ